

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Ստամբուլում գրվում են ռուսական
Тифлис. Редакция „Мусака“

ՄԱՅԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդ դժբաղդութիւն կը լինէր:—Ներքին
տեսակետէն: Նամակ Ղարալից: Նամակ
Գերբէնդից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբա-
գրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսակե-
թիւն: Հայոց պատրիարքի հրաժարականը:
Հայոց ազգային ժողովի ծանուցումներ: Գաւառացի
հայերի խնդրագրեր: Նամակ Թիւրքիայից:—
Սառն լուրեր:—Աշխարհի հեռագիրներ:—Յայ-
տարարութիւններ:—Տեղեկացոյց:

ԱՅԴ ԴժԲԱՆԴՈՒԹԻՒՆ ԿՐԼ ԼԻՆԵՐ

Մեր վերջին առաջնորդող յո-
դուածում մենք ասում էինք թէ
Թիւրքաց հայերի համար դժբաղ-
դութիւն կը լինէր եթէ բոլոր
հայ-կաթօլիկները և հայ-բողոքա-
կանները կրկին վերադառնային
լուսաւորչական եկեղեցուն:

Բացատրենք մեր միտքը:

Լուսաստանի յայտնի է որ ա-
սիացուն յատուկ է կրօնը նախա-
դասել ազգութեանը: Լսիացին
փոխելով իր կրօնը, կարծում է
թէ դորանով փոխում է և իր
ազգութիւնը:

Եւրոպացիները յատուկ է
և հայերին:

Հայ բողոքականներից շատերը
և հայ կաթօլիկների մեծ մասը
իրանց հայ լին համարում, միայն
այն պատճառով որ չեն պատկա-
նում լուսաւորչական եկեղեցուն:
Բայց ինչքան էլ դրանք մոլեռանդ
լինէին, այնու ամենայնիւ դրանց
մէջ կան լուսաւորված մարդիկ,
որոնք հասկանում են թէ կրօնը
ոչինչ գործ չունի ազգութեան
հետ, և լինելով ուրիշ հաւատի,
քան թէ հայերի մեծամասնու-
թիւնը, այնու ամենայնիւ հայ են
համարում իրանց:

Եւրոպացիները մասը հայ-
կաթօլիկների և հայ-բողոքական-
ների կարող են ներգործել իրանց
մնացած համադաւանների վրա,
որոնք դեռ ընկած են մոլեռան-
դութեան մէջ:

Բայց կայ հայոց ազգի մէջ
Թիւրքիայում մի ուրիշ, աւելի
մեծ, աւելի բազմաթիւ, աւելի մո-
լեռանդ տարր, այն է հայ-մուս-
մե տականները, որոնք այնքան
կուրացած են փանատիկութեամբ

Թեամբ, որ հերքելով իրանց ցե-
ղական յատկութիւնները, իրանց
ծագումը, Թիւրք են համարում
իրանց, որովհետեւ մահմետական
են....

Սրանց վրա ո՞վ պետք է ներ-
գործի. հայ-լուսաւորչականներին
անհնարին է անմիջապէս ներգոր-
ծել նրանց վրա....

Նոյն իսկ հայ-կաթօլիկները և
հայ-բողոքականները, լուսաւորվե-
լով և ազգութեան գաղափարը
ճշգրտութեամբ ըմբռնելով, ժամա-
նակով կարող են ներգործել հայ-
մահմետականների վրա, իրանց
օրինակով:

Լսիացին, ասում ենք, չէ կա-
րող հասկանալ, որ կարելի լինէր
բաժանել կրօնը ազգութենից,
բայց երբ որ ժամանակով մոլե-
ռանդ հայ-մահմետականը կը տես-
նի որ լուսաւորված հայ կաթօ-
լիկը և հայ-բողոքականը իրանց
հայ են համարում, նա ինքն էլ
կը խախտի իր նախապաշար-
մունքի մէջ....

Հայ-կաթօլիկը և հայ-բողո-
քականը կասեն հայ-մահմետակա-
նին. «մենք էլ լուսաւորչական
լինք, բայց այնուամենայնիւ հայ
ենք ազգութեամբ, ուրեմն դուն
էլ հաւատարիմ մնալով բո հաւա-
տին, պէտք է քեզ հայ համա-
րես, որովհետեւ ցեղով հայ ես»:

Եւրոպացի հայոց ազգի համար
բողոքականութիւնը և կաթօլի-
կութիւնը կարող են հայ ազգի
մեծամասնութեան և մահմետա-
կանացած հայերի մէջ, ամբողջ
ազգի ընդհանուր շղթայի մէջ
կապող օղակ դառնալ:

Եւրոպացիները որ մենք
օգտուէտ ենք համարում հայոց
ազգի մէջ այլադաւանների դոյու-
թիւնը, որոնք իրանց օրինակով
կազդեն ազգի համար առժամա-
նակ բոլորովին կորած մահմետա-
կան հայոց տարրի վրա:

Եթէ այդ կապող տարրերը չը
լինէին, հայ-լուսաւորչականների և
հայ-մահմետականների մէջ բոլոր
կապերը կտրված կը լինէին, կրօ-
նի տարբերութեան պատճառով
և այն պատճառով որ մահմետա-

կան հայը երբեք իր աչքի առջե-
մ օրինակ չէր ունենայ, որ կա-
րելի է հայ լինել, առանց հայ
ազգային եկեղեցու ծէսերը դաւա-
նելու:

Եթէ այդ կապող տարրերը չը
լինէին, ասում ենք, դժուար թէ
մի որ և է ժամանակ հայ-լուսա-
ւորչականներին կաջողվեր դրաւել
իրանց մահմետական ցեղակիցնե-
րին դէպի հայութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՐԱԼԻՑ

22 մարտի

Այս տարի փետրվարի 15-ին պատահեցի
Ղարալ գիւղը, որ 35 վերստ հեռու էր
լինի Ալեքսանդրապոլից, Բնակիչների վարուց,
բարուց և սովորութեանց մասին ոչինչ չեմ կա-
րող ասել, քանի որ 5 ժամից աւելի չը մնա-
ցինք այդտեղ. միայն աւելորդ չեմ համարում
մի երկու խօսք ասել այդ գիւղի ծխական դպ-
րոցի մասին, որ շատ վաղուց չինված լինելով
հասարակութեան ծախսով արդէն խաղառ ծե-
րացած էր և վերջին մնաս բարոյիս ասելու
պատրաստ: Գտաւոր առանց տախտակամածի
և խոնաւ, երկու փոքրիկ լուսամուտ ունէր, մէ-
կը խոտով ծածկած էր ցուրտ չը լինելու հա-
մար, իսկ միւսը թղթած, երկու երկար պատե-
րի տակ, դուռահանական կերպով մեխած էին
կօճերի վրա երկու կոպիտ տախտակներ, մէկը
ցածր որպէս նստարան, միւսը նորանից քիչ բար-
ձրը, որպէս գրասեղան աշակերտաց համար:
Վարժատան վերին անկիւնում ամբարից տախտ
էր կապած և նորա վրա վարժապետի կեղտոտ
տեղաշորը փռած, որովհետեւ վարժապետը գի-
շեր ցերեկ դպրոցումն է մնում: Յիշեալ կոպիտ
տախտակների վրա 30-ից աւելի մանուկներ
նստած, բարձր ձայնով սովորում էին որը
կտակարան, որը ժամագիրք, որն էլ սագմոս:

ձիշդ ժամը 2-ն էր, որ մտանք դպրոցը:—Վար-
ժապետը, որ մի միջնասակ և առողջ տղա-
մարդ էր, որոնքը հագած ունէր գիւղական
բարձրակրօնի բաշմակներ, կիւռ օյի սպի-
տակ լայն շաւար կարմիր դօրեով. աշակեր-
տի ձեռք զոյնզոյն կտորներից կարած կարճ
բաճկոն, սորա վրա սօլ դատի մի հին շի-
ն եւ, որի վրա ամուր կապած էր Պարսկաս-
տանի շաէն զօտիկ չինելի վրա հագած էր
նոյնպէս սօլգաթի մի կարճ և կեղտոտ մուշ-
տակ, զուլին էլ ծածկած էր աստիճանաւորի
մի շատ հին գտակով: Մի լաւ փափուկ ձիւղոտ
էլ ձեռին ձեռում էր դպրոցի երկայնութեամբ:
—Ընկերներս հետ ներս մտնելով, գտակներս
վեր առանք, որդուհեցինք վարժապետին և նո-
րա խնդրելով նստեցինք իր տախտի վրա:
Երեք րօպէից յետոյ բացվեց մեր և վարժա-
պետի մէջ հետեւալ խօսակցութիւնը որ հա-
մարեա բառ առ բառ դնում եմ այս տեղ:
Միայն չը մոռանանք ասել որ մենք վարժապետի
մօտ ձեռքացանք բոլորովին անգրագետ:

«Ներեցէք, պ. վարժապետ, խօսքը բաց արի
ես, ինչպէս է ձեր ազգանունը»:

—Հրամանքիդ ծառայ, Գարութիւն վարժա-
պետ Արծրունի:

«Ո՞ր տեղացի էք, և ձրտեղ էք աւարտել
ձեր ուսումը»:

—Ես տաճկաստանցի եմ (խօսակցութեան
ոճը շատ հեռու էր ճակատադէմից) շատ երկր-
ներ եմ տեսել, շատ վարժատներ մտել և վերջը
թաղմիւս (աւարտ) առել եմ խորմեան հայրիկի
մօտ:

«Ինչ ես սովորացնում աշակերտները»:
—Հայոց լեզու, ժամագիրք, կտակարան, Նա-
րեկ, ալլեպրա և Հայաստանի աշխարհագրու-
թիւնը:

«Ինչ բան է ալլեպրան, զարմացած հարց-
նում ենք մենք»:

—Ալլեպրան այն է, որ ես այդ արհեստով
կարող եմ իմանալ թէ մի սոմար ցորենի մէջ
քանի հատիկ կայ. Գրիստոսի ծննդեան օրից
մինչև հիմա քանի վարկեան է անցել, տասը
հազար փութ երկաթը քանի միտալ կանէ....

«Կարելի է, վարժապետ, ալլեպրայից մի եր-
կու բան հարցնէք ձեր աշակերտներին»:

—Շատ լաւ կը լինէր, բայց ներդրութիւն
արէք, այսօր ալլեպրայ սովորող աշակերտս չի
եկել:

«Միթէ միայն մի աշակերտ դիտէ ալլեպրան»:
—Ի հարկէ մի աշակերտ, ալլեպրան շատ
դժուար բան է, ամենի խելքի բան չէ: 15 տարի
կեանքս միայն ալլեպրայի վրա եմ մաշել և հա-
զիւ հազ զուլս հանել:

«Կարծեմ ասացիք թէ աշխարհագրութիւն
էլ էք սովորացնում»:

—Այո, պատասխանեց վարժապետը, և դուրս
հանեց տախտի տակից, գլղղված և կեղտոտ
փալասով փաթաթած մի շատ հին պատուոված
քարտէշ, որ այնպէս էր կեղտոտել, մրոտել ու
դեղնել, որ ամենահմուտ աշխարհագրութիւն
գիտցողն էլ կը դժուարանար նորա վրա մի
գետ կամ մի քաղաք ցոյց տալ:

«Այս ինչ բան է, զարմանալով հարցնում
ենք»:

—Շուէ, աշխարհագրութիւն որ կասն ու է,
ժպտալով պատասխանեց, սա գիտցողը կարող
է առանց հարց ու փորձի, առանց առաջնոր-
դի բովանդակ աշխարհը պատել...—Այս ժա-
մանակ վարժապետը նկատելով որ աշակերտ-
ները բերանաբաց և լուռ լսում են մեր քաղ-
ցըր խօսակցութիւնը, մեղմբար ակնարկեց
«վարժապէ՛ք սիրելիք, կարդացէք, որ դուք էլ
մարդ դառնալ, մարդի սր ար խառնուիք»:

Ինչպէս երեւց վարժապետը շատ կերկա-
րացնէր իր ճառը, եթէ մենք չընդհատէինք
հետեւեալ խօսակցութեամբ.

«Պ. վարժապետ, եթէ կարելի է, մի երկու
աշակերտի կարդացրու, լսենք»:

—Շատ լաւ, այ տղայ, վերկաց «խոնարհեցոյ,
ապրեցոյ ասա. ծծ, կարապետ, դու էլ «հա-
սեալքս ի ժամ երեկոյս» ասա:—Երկուսն էլ
մեքենայաբար կատարեցին վարժապետի հրա-
մանը:

Բարեկեցիք վարժապետին, դուրս եկանք
գնացինք մեր իջևանը. երկու ժամից յետոյ
ձիւր հեծած դուրս էինք գալիս գիւղից, բայց
յանկարծ աչքերովս ընկաւ ժողովրդաց բազմու-
թիւն, որ գիւղի մէջ սարսափելի ազմուկ էին
բարձրացնում: Քիչեցինք ձիւները դէպի կռող
բազմութիւնը, տեսանք որ մի երկուսը վերոյի-
շեալ վարժապետի թեքերից բռնած, քաջաչաւում
էին դէպի ուսումնարան, մի երկուսն էլ մի ու-
րիշ տղամարդի նոյնպէս քաջաչաւով հեռացնում
էին այդ տեղից: Մտեցայ այդ զիւղացուն և
հարցրի, «Ինչ է, բարեկամ, ինչ է պատահել
ձեզ, ինչու էք կուռում միմեանց հետ»:

«Այդ, ջան, զլխուդ մեռնիմ, տաքացած պա-
տասխանեց գիւղացին, մենք էդ չաթուքեաւան
վարժապետի ձեռքը կրակն ենք ընկել: Տարե-
կան համ 130 մանէթ նախը փող կուտանք, համ
էլ տարեկան ուտելիքը ու վառելիքը: Մեր կանտո-
րախոն էլ այնպէս է որ տղայ ունեցողն էլ
չունեցողն էլ պէտք է վարժապետին հախ տայ
ու նրա ծախսերը հոգայ. հիմայ վարժապետն էլ
գիր է տուել, որ վարժատունը տղայ չունեցող-
ներին եթէ գրելու բան պատահի, առանց փողի

գրէ: Հիմի ես վարժատունը տղայ չունիմ, ամեն ամիս էլ ինձանից վարժապետի ծախս կանեն, լաւ անպէտ, զիւններն ուտէ, թող առնեն, իմ նեղութիւնս էն բանի վրա է, որ այսօր ինձ մի թամասուք է պատահել, տարայ թէ գրել տամ, ինձ հայնոյելով վարժատանից դուրս արեց թէ. «գնա 10 շաբի բեր գրեմ, ես քո հօր նոքարը չեմ»: Հիմի հոգով խօսի, աղա ջնան, ես մեղաւոր եմ, որ երթամ վարժատան մէջ պառկեցնեմ, մէ լաւ ուզածիս պէս ջնուեմ, որ մէկ էլ էղնի, լաւ հասկանայ իւր տուած կանտորատի գորու թիւնը...» Այժմ թողնում եմ ընթերցողին դատելու թէ այսպիսի խաբեայ վարժապետները որքան օգուտ կուտան միամիտ գիւղացոյ: Ս. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆՆՈՒՅ

11 մարտի

Դերբենդը այս օրերս յառաջադիմութեան մի քայլ արաւ որ հարկաւ հետաքրքրելի է ամեն հայի. թէ ինչ էր այդ յառաջադիմութեան քայլը, կը փութամ համառօտ տեղեկութիւն տալ, գիտենալով որ ոչ սակաւ ուրախութիւն պիտի պատճառէ մեր բարեկէսը ազգայնոց:

Դերբենդում, թիւսպէս մի երկու անգամ յիշատակութիւն կար, հայերը պ. Առաքել Բաբա-յեանցի առանձին հոգատարութեամբ շինել են բաւականին վայելուչ դպրոց, որ եօթ սենեակներից և մի դահլիճից բաղկացած է, անցեալ դեկտեմբերի 31-ին դպրոցը օրհնութեան հանդէսը կատարվեցաւ և Աստուածամօր անունով Մարիամեան դպրոց կոչվեցաւ. օրվան հանդէսին ներկայ էին Դերբենդի հայ հասարակութեան մեծ մասը. ընդհանուրի ուրախութիւնը մեծ էր. օրհնութեան հանդէսը վերջանալուց յետոյ կարդացվեցան ճառեր, որոնց բովանդակութիւնն էր աղջկանց ուսման և դաստիարակութեան պէտքը մեղադրում: Ընթերցումից յետոյ հոգաբարձուք դպրոցի ապահովութեան համար հրաւիրեցին ժողովրդեան մի գումար ստորագրել, որ շատ սիրով ընդունվեցաւ թէ տեղիս կանանց կողմից և թէ օտարական հայերից, որոնք միշտ նպաստած են Դերբենդին և նպաստում են ամեն մի կարեւոր միջոցում:

Ամսիս 1-ից սկսվեցաւ օրիորդաց դպրոցի մէջ դասաւանդութիւնը, այժմ բաց է մի դասարան երեք բաժանմունքով սովորում են 30-ի չափ օրիորդներ. դպրոցը ունի երեք ուսուցիչ և մի վարժուհի ձեռագործութեան:

Կարոցի արդիւնքը կազմում են եկեղեցու աւելցած գումարը, աշակերտուհեաց թոշակադրամը, բարերարաց կամաւոր տուրքը և դպրոցի մայր գումարի տոկոսները: Թէ ինչ ուղղութիւն կը ստանայ դպրոցը այդ հոգաբարձուհիների աշխուրջ ներդրումներից, նրանք քիչ խօսելից և շատ գործելից և վարժապետաց բարեխիղճ վարմունքից կախումն ունի:

Շատ ցանկալի էր եթէ մեր Դերբենդի կանայք ինչ եռանդով որ սկսեցին խնամատար գրվել զբարոցին, նոյն եռանդով շարունակեն այսուհետեւ էլ միշտ յաճախեն դպրոցը, գիտնալով որ այդ այսպիսի մի ապագայ է, որ թէ մատչելի է իր սեւեռն և թէ իր գործակցութիւնը կարեւոր է միշտ և արդիւնաբեր: Քաջութիւնը մի գործ սկսելը չէ, այլ գործին այնպիսի կերպարանք, այնպիսի ուղղութիւն տալու մէջն է, որ անխափան շարունակվի առանց նիւթական և բարոյական վնաս կրելու:

Յոյս ունենք որ մեր յարգելի հասարակութիւնը քաղցր աչքով կը նայէ դպրոցի վրա, առանց խնայելու նիւթական միջոցները, իսկ մեր պ. հոգաբարձուհիները, իրենց պաշտօնի բուն նշանակութեամբ կը գործեն միաբան, մէկ կողմ դնելով անձնական շահերը, կրքերը, որոնք միշտ եղել են և կը լինեն մեր դպրոցների յետաձգանքութեան պատճառներից մէկը:

Հայ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալեքսանդրապոլ, 15 մարտի

Ձեր լրագրի 32 և 33 համարներում այնպէս թղթակցիցներ աշխատում են արատաւորել մեր ուսումնարանաց ուսուցիչներին, զրպարտելով նրանց իւր պատրաստակի վարուց և իրանց պաշտօնին վերաբերեալ պարտազանցութեանց մէջ:

Նրանցից մէկը (33 №-ում) բոլոր ջանքով ուղղում է ցոյց տալ հոգաբարձութեան կատարեալ անհոգութիւնը և անտարբերութիւնը թէ ուսումնարանաց և թէ նոյն ուսուցչաց ընթացքի վերաբերութեամբ: Հարկ ենք համարում յայտնել հրապարակաւ, որ յիշեալ թղթակցիցների մեղադրանքները անխիղճ զրպարտութիւններ են. մեր ուսուցչաց բարքի մէջ մինչև այժմ ոչ մի նախատանաց արժանի պակասութիւն չէ նշմարված, իսկ իրանց պաշտօնի մէջ նրանք ցոյց են տուել միշտ ինչպէս և այժմ այնպիսի բարեխիղճութիւն և եռանդ որ իրաւամբ արժանացած են մեր և ժողովրդի յարգանքին և համակրութեանը, որի ապացոյց կարող է լինել և այն որ մեր երկրի ուսումնարաններն էլ չափից դուրս լինել են ուսանողներով և հնար չը կայ լցուցանել բազմաթիւ ծնողաց պահանջները նրանց որդիքը ուսումնարանաց մէջ տեղաւորելու համար: Ինչ որ հոգաբարձութեանս գործառնութեանը կը վերաբերի, մենք չենք կարող այնպէս թղթակցիցների կրքոտ աչքերով նայել մեր ուսումնարանաց աշխատակորներին վրա, որ ինչ է երկու տղայից գովաւանք ստանանք: Մենք ճանաչում ենք մեր պարտականութիւնը և կարելոյն չափ կատարում ենք: Հոգաբարձական ժողովները կազմվում են իւրաքանչիւր շաբաթ և կանոնաւոր ժողովներ կազմելու համար էլ կարողութիւն չը կայ երեւակայական այցելուները ու դատաւորների խրատներին: Թղթակցիցները լաւ կանեն, որ իրանց արհամարհելի կրքերի համար ասպարէզ չընտրեն մեր ուսումնարանները, որոնց վրա անխախտելի է հասարակութեան համակրութիւնը:

Խնդրում ենք այս մի քանի տողերը բարեհաճէք տպագրել ձեր լրագրի մէջ ճշմարտութիւնը վերականգնելու համար:

Վեց հոգաբարձուների ստորագրութիւններ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 մարտի

Աստիկանութիւնից տեղեկութիւն ստացվեցաւ, որ աւագ շաբաթ հրապարակական դասախօսութիւն թող տալը անյարմար է: Ուստի իմ դասախօսութիւնը յետաձգվում է գալով շաբթուան, ապրիլի 5-ին, հինգշաբթի օրը:

Ա. Բաբայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ձատկի տօների պատճառով մեր այսօրված համարը վերջինն է չարչարանքի շաբաթի մէջ: Այնուհետեւ «Մշակը» պէտք է հրատարակվէր, ինչպէս ամեն տարի, եթէ օրից յետոյ, այսինքն հինգշաբթի օրը, ապրիլի 5-ին: Բայց որովհետեւ այս օրերս, բացի սորանից, տեղափոխվում ենք մի տպարանից միւս տպարան, այդ պատճառով ստիպված ենք դարձեալ մի երեք, չորս օր տեղափոխվելու և կասանք սարքելու վրա կորցնել: Ուրեմն «Մշակը» հետեւալ համարը կը կարողանանք միայն ապրիլի 10-ին հրատարակել:

Այսուհետեւ «Մշակը» տպվելու է նոր տառերով և աւելի մաքուր Մի իսկ ուսնի տպարանի մէջ:

Շնորհակալութեամբ ստացանք ՆՈՐ-ՆԱԽԻ-ՋԵՒԱՆԻՑ պ. Սիւլիկի «Նոր-Նախիջևանի Բերնար» վերնագրով բանաստեղծութիւնների ժողովածուն: Գինն է 1 ռուբլ, ծախվում է ի նպաստ թատրոնաւարաց, Բարեգործական և Մարդասիրական ընկերութիւնների Նոր-Նախիջևանում: Բոստով (Գօնի վրա), տպարան Յ. ՏԵՐԱՅԵՐԱՅԻ համեստի, 1879 թիւ:

Մարտի 25-ին, կերակի օրը Թիֆլիսի Սօբորանիայում զօրօտ Գրիգոր Արծրունի կրկնեց իր դասախօսութիւնը «Թիւրքաց հայերի տնտեսական դրութեան» մասին: Հասարակութիւնը բաւական բազմաթիւ էր և դասախօսութիւնը լաւ ընդունվեցաւ: Գասախօսութեան ժամանակ ամբիօնի մօտ կախ էր արած բաւական մեծ դերձով մի դեղեցիկ քարտէշ թիւրքաց Հայաստանի, որ նկարել էր Արծրունու դասախօսութեան համար իշխան Միքայէլ Բէհրունի: Հասարակութիւնը սաստիկ հետաքրքրված էր քարտէշով:

Մարտի 23-ին, եկեղեցական տառն և մէկ ու

կէս ժամին կրկին հրդեհ ընկաւ Թիֆլիսի Սօբորի վրա գտնվող փայտեայ շինութիւնները: Կըրակը սարսափելի էր և այրվեցան 10—15 տուն:

Մարտի 23-ին Թիֆլիսի Կրօսոփի դահլիճում ուսաց սիրողների ներկայացումն կար յօգուտ Սաղի վրա հրդեհից վնասվածներին: Եւ իսկ այն զինքը յայտնվեցաւ կրկին հրդեհ:

Հին-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի եկեղեցու մի մահոտիս երեքփոխան չէ կամենում հասարակութեանը հաշիւ տալ: Եթէ պ. երեքփոխանը կը շարունակէ իր բռնած ընթացքը, նախկազիրը սպառնում է նկարել նրա մի քանի տարվայ գործունէութիւնը, որ բաւական վնասակար է եղել:

Մեզ հաղորդում են ՎԱԿԻԿԱՎԱՋԻՑ, որ մարտի 19-ին զինքի ժամանակ զինուորական հիւանդանոցի ֆելդշերներից մէկը յարձակվում է հեռագրատանը ծառայող մի հիւանդի վրա և խանջալով նրա գլխին խիլելով սպանում է նրան: Ֆելդշերը նոյն զինուորականում մտնում է հիւանդանոցի միւս բաժինները, բայց ծառաները յետ են դարձնում: Ֆելդշերը վերադառնալով իր զոհին մաս մաս կտրում է: Հասնում է պոլիցիան և չարագործին կախաւորում է: Ասում են, որ չարագործը խելացիոր և մի և նոյն ժամանակ հարբած է եղել: Վաճառականները զանգառովում են առեւտրի պակասութեան վրա:

Նրեքշաբթի, ապրիլի 3-ին մի քանի երկուսարդներ կը տան մի ներկայացումն Թիֆլիսի Ներսիսեան հին դպրոցի դահլիճում: Խաղալու են առաջին անգամ «Վամբայա» կոմէդիա չորս գործ. հեղ. Մ. Պատկանեանցի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԻԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Երբ ասիէ առաջ կոյսերական բարձր հրամանաւ Հայոց Կ. Պօլսը Պատրիարքութեան պաշտօնին կոչուեցայ անարժանաբար, բարձրագատիւ նախարարաց դիմելով իւրաքանչիւրին առանձին խնդիր մատուցել, որպէս զի իմ տեղը ուրիշ մշնտրուի, վասն զի անձնական տկարութիւնս չէր ներէր ինձ այս պաշտօնին վարել արժանապէս: Մի և նոյն խնդիրն վերջն ալ կրկնեցի գրով և բանիւ, սակայն բարձրագոյն հրամաններ և Ազգիս խնդիրն ու ստիպումն հարկադրեցին զիս ընդունել ինձ յանձնուած Պատրիարքական պաշտօնն և շարունակել զայն: Բայց ըստ ուրում այս միջոցի մէկ կողմէ անձնական տըկարութիւնս կը սաստկանայ, և միւս կողմէ զաւառացի ժողովուրդս զեղծմանց ու բազմատեսակ հարստահարութեանց պատճառաւ ծայրայեղ թշուառութեան և զրկանաց մատնուած է, և Օգոստոսիա Սուլթանին հո վանւոյն ներքեւ անոնց անդորր կեանք մը շնորհելու համար մատուցած թախանազին խնդիրներս ընդունելութեան չեն արժանանար, ուստի անկարելի եղած է ինձ այլ ևս շարունակել Պատրիարքական պաշտօնը, և հարկադրեալ եմ հրաժարական մատուցանել և կենացս օրերն անցնել աղօթելով Օգոստոսիա Սուլթանին կենացը համար և մաղթելով որ Ամենակալն Աստուած ձեր բարձրութեան և Տէրութեան նախարարաց զօրավիգն ըլլայ և բարեխաղութիւն պարգեւէ: Կաղաչեմ ուրեմն որ հրաժարականս ընդունելով հաճիք զիս արձակել այս պաշտօնէն և շնորհ ընէք չը զանալ Ազգիս և նուաստիս ձեր գթութեան անխորին և բարձր համակրութիւնն:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԿԱՆ ՄԱՆՈՒՅՈՒՄՆ

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր. Ազգային ժողովը Քաղ. ժողովը մէկ գրոյն վրայ որով պատրիարքական պաշտօնավարու-

թեան նկատմամբ դարման մը կը խնդրէր ի նիստ ԺԸ. 16 փետրուար, յետ վեճաբանութեան և յետ ընթեռնոյ մի և նոյն նիւթի վրայ վարչութեան երկուց ժողովոց տեղեկագիրն և Ձեր բարձրաշնորհ Սրբազնութեան առ Ատենապետ Ազգային ժողովոյ ուղղեալ հրամանագիրն ի նիստ ԺԹ. 22 փետր. մանրամասն վեճաբանութեամբ խնդրոյն ամեն պարագաներն ի նկատի առնելով որոշեց Ա. Ձեր Սրբազնութեան հրաժարականը չընդունել Բ. Ձեր Սրբազնութիւնը պատրիարք մնալով և ի հարկին նաեւ փափուկ և կարեւոր խնդրոց համար պէտք եղած պաշտօնատանց Ձեր խնդիրներն ու առաջարկութիւններն անձամբ շարունակելու իրաւունք վերապահելով հանդերձ, եպիսկոպոսաց դասէն մէկն առժամանակեայ փոխանորդ կարգել Ձեր Սրբազնութեան, և Կ. պաշտօն յանձնել նմա Ազգային ժողովոյ նախագահին, ընթացիկ գործերը անօրինելով մէկ բառով՝ փոխանորդութիւն ընել պատրիարքական պաշտօնին վերոյիշեալ շրջանակին մէջ, և վերջապէս սոյն տնօրէնութիւնն և ըստ այնմ կատարուած փոխանորդի ընտրութիւնը Բ. Դրան ծանուցանել և հաւանութիւնը խնդրել պայման դնելով միանգամայն որ նորընտիր փոխանորդն անմիջապէս սկսի իր պաշտօնն Ազգային գործոց շրջանակին մէջ և Բ. Դրան հետ յարաբերութեան մէջ մոնելու համար սպասէ Բ. Դրան հաստատութեան հրամանին:

Ազգային ժողովը սոյն վերջին տնօրինութիւնն այսօր ի նիստ Ի. որոշելէ ետեւ՝ անմիջապէս քուէարկութեան ձեռնարկելով՝ բացարձակ առաւելութեամբ քուէից փոխանորդ ընտրեց Ձեր Սրբազնութեան՝ Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան, զոր պատիւ ունինք Ձեր Բարձրաշնորհ Հայրութեան ներկայել և խնդրել որ ընդունիլ և յանձնել շնորհ ընէք նմա Ձեր փոխանորդութեան նկատմամբ և իր պաշտօնավարութեան սահմանեալ շրջանակին մէջ ինչ որ պատշաճ կը դատւի: Սոյն տնօրէնութիւնը Ձեր բարձր Սրբազնութեան հաղորդելու առթիւ՝ հարկ կը համարեմք նաեւ Ազգային ժողովին մէկ երկրորդական որոշումն ալ առաջի առնել, որով արդի պատրիարքական փոխանորդին տիրուոր շփոթութեան տեղի չը տալու համար ճախագահ Դատաստանական խորհրդոյ՝ փոխել արժան դատեց:

Ներքեցէ մեզ Բարձրաշնորհ Ս. Հայր, յայտ առնել նաեւ մեր և ամբողջ երեսփոխանութեան, կրեամբ ըսել նաեւ բոլոր Ազգիս զգացմունքն, որ Ձեր Սրբազնութեան անձնուէր ջանից և մեծադործութեանց համար սքանչացման հետ Ձեր պատրիարքական բարձր պաշտօնը շարունակելու և Ձեր խնամքը մեր վրայէն անպակաս ընելու մասին փափաք և իրձ կը պարունակէ:

(Մատիս)

ԳԱԽԱՌԱՅԻ ՀԱՅՈՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ

Ահաւասիկ դաւառուցի ազգայնոց կողմէ Ազգ. ժողովոյ մատուցուած խնդրագրին պատկաճէնը:

Վսեմափայլ փաշա, Ատենապետ Ազգ. պատուելի ժողովոյ:

Ստորագրեալ Հայաստանի պանդուխտ դաւառուցիքս ներկայացուցիչք Կարոյ, Վանայ, Մշոյ, Տիգրանաւերտի, Խարբերու, Նրքնկայի, Բալուայ, Չեղածաղի, Անայ, Բաբերդի, Բղիթի, Կերջանու, Սեբաստիոյ, Ներսիսի, Կեսարիոյ, Չարսանձաղի, Ամասիոյ, Տիֆլիսի, Նիկոպոլոյ, Տրապիզոնի, Կիլիկիոյ ևն. ևն. կը փութամք ներկայ հանրագրովս պատկուելի Ազգ. ժողովոյ բարձր ատենիդ զիմելով խոնարհաբար յայտնել այն եռանդուն և անձնուիրական ջերմ գգացումը, զոր կը տածեմք հանսպաղ նորին բարձր Սրբազնու-

При понужденіи чинами Тифлиской полиціи гражданъ города къ очисткѣ и ремонту улицъ и тротуаровъ многіе изъ гражданъ отказываются отъ исполненія этого требованія на томъ основаніи, что очистка и ремонтъ улицъ и тротуаровъ лежитъ на обязанности не ихъ, а мѣстной Городской Управы, получающей съ домовладѣльцевъ для этой надобности установленную денежную плату. Приведенное заявленіе гражданъ города, даже нѣкоторымъ г. г. Мировымъ Судьямъ, служило поводомъ къ освобожденію отъ взысканія лицъ, противъ которыхъ полиціею было возбуждено судебное преслѣдованіе за неисполненіе требованій по очисткѣ и ремонту улицъ и тротуаровъ города. Для устраненія объясненнаго недоразумѣнія было сдѣлано сношеніе съ Тифлискимъ Городскимъ Головою, который 24-го февраля текущаго года за № 915 увѣдомилъ, что опредѣленія Городской Думы о переложеніи натуральной повинности по содержанію въ исправности и чистотѣ улицъ противъ частныхъ домовъ въ денежную не было, равно какъ и ежегоднаго сбора съ домовладѣльцевъ на покрытие расходовъ по очисткѣ и перемощенію улицъ Управою не производится. Въ виду приведеннаго отзыва г. Городскаго Головы и на основаніи ст. 844, 845, 846, и 848, т. XIII уст. мѣст. полиціи по охраненію народнаго здравія вторично приглашаю г. г. домовладѣльцевъ къ немедленной очисткѣ дворовъ, улицъ и тротуаровъ города отъ навоза и другихъ нечистотъ, а также и объ исправленіи мостовыхъ. За неисполнѣніе настоящаго требованія виновные будутъ преслѣдоваться и отсылаться къ суду.

Тифлісскій Старшій

Полиціимейстеръ Полковникъ *Мерклингъ.*

ՀՈՅՍ ՏԵՍԱԿԻ

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ“ ԼՍՄԵՐԻ

ԼԵՕԹԵՐՈՐԴ (ՅուՆախրի) ԹԻՒՐ

Բ ո Վ ա ն դ ա կ ու թ ի ՚ Ն. Ի. Մայրենի լեզուի ուսուցիչ. զործնական մասը (վերջ), Ա. ԲԱՆԱԹՐԵԱՆՅԱՆ, Ս. Պետապոլցի: III. Ընթերցարանը և նորա նշանակութիւնը ժողովրդական դպրոցներին մէջ. Ա. ԲԱՆԱԹՐԵԱՆՅԱՆ: IV. Երկու խմբ. Կ. Պօլսոյ «Մտաւան» լրագրի կարծիքի առիթով «Մանկավարժական թերթի» վերայ:

Ստորագրելի կարելի է Տիֆլիսում «Մանկավարժական թերթի» խմբագրատունն և Պ. Զ. Կրիզորեանցի ու Կենտրոնական գրավաճառանոցներում: Խմբագրությունն հասցեն՝ Тиф-
лись. Въ Редакцію Армянскаго журнала „Педагогическій Листокъ“

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

Լոյս տեսաւ Փոփոք ամսագրի

Երրորդ (մարտի) համարը՝

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. I. Հացի խնդիր. վկայատույթիւն Պ ե ի Ը Պ ա ռ ե ա ն ջ ի, II. Հր-
պատակութեան և խղճի գաղափարը նախնի Հայոց մէջ, Կ. Կոստանէկանց, III Մի և-
րեւ Կարնոյ նորագոյն պատմութիւնից, Ա. Նրիշեան, IV Սիրոյ զոհեր, բանաստեղծութիւն
Գ ա մ ա ռ Ք ա թ ի պ ա յ ի, V Մի Լեհացի Սազմարդ: ՄՍՏՆԵՒԹՈՒԹԻՒՆ VI Տեղեկա-
գրութիւն Հայոց գաղթականութեան, տիկին Ս ր ը ու Հ ի ե Ր ի յ ե ա ն, VII անկեզօտներ,
ժողովածու Գալուստ Նիրագանեանի, Գ Ր ի չ, VIII Միհրդատ Ամերիկեան, կենազրութիւն,
Գ. Շմշկեան, ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Արեւելեան խնդիրը և Հայերը, X Ներսէս պատրիարքի
կնոյցարկ: ՅԱՒԵՆՈՒԹՅ XI. Աստուծաբանի առողջապահութեան հորոցեր, Ա. Բ ա բ ա յ ե ա ն,
XII յայտարարութիւններ:

Ստորագրուել է կարել է թիֆլիսում: Փորձի խմբագրատանը և Կենտրոնական գր-
արված աշխատանքում Օտարաբարդաբայը կարող են գրվել խմբագրին հետևեալ հասցեով:
Тифлиси. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗԷ“:

Խմբագիր—Հրատարակիչ Աբգար Յովհաննիսյան

ԵՐԵՎԱՆԻՄ Աստաֆինկայայ փողոցի վրա,
քաղաքի կենտրոնում ձեռնառու դեմով ԾԱԽ-
ՎՈՒՄ է քարկել և կրկից շենքեմ մի ՏՈՒՆ:
Տան մէջ կան տաս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարա-
նոցներով, սառնուցառուն և երեսուն և չորս
ԽՆՆԵԿ Ժառանգի բնակարաններով և պա-
ռաբանով տան ամրոցը երկայնութեամբ,
ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն
է, բակի մէջ ԱՌԱՋԱՆ կայ: Տան դիմացի
կողմը ԵՐԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ
ԼԱՏՆՈՒԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին: ԱՄ-
բոցը տառն քաղաքկան 5600 ռ. եԿԱՄԻՏ է
տալիս Յիշեալ տունը ԳՆԵՆ ցանկացողները
կարող են դիմել երեսան տան տէր Արտեմ
Պապիկովին: Նոյն տան մէջ ցանկանում են
Յաննէս մէկ ուրիշը ԲԱՂՏԵՐԱՆԵՆԻԻ ԽԱ-
ՆՈՒԹ, պիտանի բոլոր պարագաներով: ԱՍ-
ՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՑ:

3-4

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА

ГЕРМАНЪ. на Гановской улицѣ въ домѣ Іоанисіани. Имѣю честь извѣстить почтенеишему публику, что принимаю заказы своими товарами военныя и статскія платья и исполняю собственнымъ присмотромъ и также отдаю на прокатъ разныя костюмы кромѣ того въ моемъ магазинѣ имѣется мужскія и дѣтскія костюмы заказы и продажа производится по весьма умѣреннымъ цѣнамъ.

1—10

ՌՈՒՄԱՅ ԹԵՏԻ ՎԱՃԱՌԱՆՈՅՑՅՆ Նոր ստաց-
վեցան 10000 Փուետ ֆուչանի, և Վեա-
լտոյ Թէյ սեփական փոխանակութեան 1
Բ. 20 Կ. մինչև 8 Բ. ֆուետը: ֆուչանի Թէյի
համար ինձանից գնողներէրից շատերը նամակ-
ներով շնորհակալութիւն յայնանցին, յոյս ու-
նենմ ապագայում գնողներէրից նոյնպէս ստա-
նալ: Ծախվում է մեծ քանակութեամբ և
փոքր: Փոստայի ծախսը ինձ վրա առնում
էմ: Հաղցէն Մլըքայէրեան կամուրջ, «ԻՆՏԵՔՏԵՆ»-ի
նման շնորհատան տակ: Վաճառական Ա. Պօլօ-
ստախիւն:

6—10

Շարաթ օր մարտի 31-ին ՓՕԹԻԻՑ դուրս
գալու է ԱՄՆԼԻ անուանված շոգենաւը, եթէ
եղանակը աջող լինի, օրի կապիտանն է Դուվ
և որ պատկանում է «Paquet» ընկերութեան:
Շոգենաւը ուղևորվելու է դէպի Կ. Պօլս և
Մարսել:

U. 97

Գառնիկ Ալեքսանյան Յարութիւննան, որը մահանումը Սարգիս Սիմոնի. Կ. Պոլսի Բերայի Թարը ծնած, 18—20 տարեկան, որ հետո գրաշարութիւն, ինքը բարձրա-հասակ, երկու տարի է որ անգղիացի վա-ճառականի մը հետ ամէկ (Պոլսէն) ելած շոգենաւով Փոթիի ելլալու, և անկէ ալ իրիկուն տնայնիւղ նպատակաւ ճամբայ ելած օրէս մինչև զայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ու-նի. ով որ տեսած է յիշեալ երկուստարկը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տա-լու շնորհիւ ընկը կարգաւորէ:

Նստէր քեսար զեղըցին Երևան
անոնով նոր դուռս եկած բրտելը ծախ
վում է հասար 15 կոպէկով Քիֆլիսի Կեն-
թրօնական և Զարդարայ Կրթութեան
գրարանատնոցներում Հարկով առնողնե-
րին կը լինի 20% զեղում, եթէ անմիջապէս
գանձան զէպի մէջ այս հասցեով. Тифлись
Григорію Теръ-Меликетову, въ Солола-
кахъ, на Сололаксой улицѣ, у Возне-
сенской церкви, въ д. Михаила Галус-
това, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան:

Բժիշկ Աւետիք Բաբայան (Բաբայեյ) ընդունում է հրապոյններն (Բժիշկի թմկանոցում հորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը զկային և հոգեկան հրապոյնիւններ թմկութւն Բացի այդ բժիշկ Բաբայան (Բաբայեյ) հինգշաբթի և շաբաթ օրերը առատեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հրանդոյնիւններ ունեցող կամ էլ իշտրականութեամբ թմկելի աղբառ հրանդնները, Հասցէն Արեգեմկայա փողոց, տուն Բայանդուրով:

7-10

Ищу попутчика или по-
путчицу до Делижана.

Адресъ: Редакція газеты
«Мшакъ.»

Въ Кукахъ, на Исарловской
улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТ-
СЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ
КОМНАТА съ отопленіемъ и
прислугой. Спросить въ редак-
ции «МШАКЪ»

ԿՈՒԿԻՆՅԱՆՈՒՄ, Իսարլովսկայա փողոցի վրա
 № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵՃՕ.
 ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ ՎԱՌՆԵՐԻՓՈՎ և
 Ճառայով: Հարցեիւ «Մշակի» խմբագրատանը:
 3-10

3-10

ՄԱՐՏԻ 28		Տ ԵՂ Ե Կ Ա Ց Ո Յ Տ		ՌԵՅԼԻՍ. 1879	
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՋԱՌԱՆՈՑ (Մարտի 27-ին)		ՀԵՌԱՅԻՐ		ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ՌՈՂԻ	
Ռ	Կ.	Ռ	Կ.	ՓՕՍ	ԲԺՇԿԱՆՈՑ
Ոսկին (պոլտիմպերիալը)	8 58	Կոմիտասի և Ան-		Ամեն տեսակ թէ նա-	Հիւանդանոցների ընդունելու-
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	գրկովկասի քա-		մակներ, թէ լրագիրներ և	թիւնը ժամը 9-ից մինչև 1
Հին 20 4. 72 պր. 1000 "	1240	ղաքները	1	թէ ծանր փոստ ամեն տեղ	ժամը կեսօրից յետոյ:
Վիգորին 50 0 առաջի փա-		Ռուսաստան	2	ուղարկելու, ընդունելու	Երկուշաբթի. Լիւի-
խառնութեան ժող. 100 "	233	Աւստրիա	3	են ամեն օր, առաւօտեան	ցեղ և Գորայեղիչ ներքին
Երկրորդ 5% վիգորին	229	Անգլիա	4	8 ժամից մինչև 1 և կեսօրից	հիւանդանոցներ, Բակոտ
Մարտիկի կուրսը 248-	100	Գերմանիա	2 88	յետոյ 3 ժամից մինչև 7,	վնեւրական և կաշու հ.,
Լոնդոնի կուրսը Օդեսայի		Ֆրանսիա	3 75	իսկ կիրակի օրերը հասա-	Քուրսերանց վերաբուժա-
վրա	105 19			րակ նամակներ մինչև 10	կան և կանանց հիւան-
Վենայի կուրսը ամէ 113 զր.	100			ժամ առաւօտեան և 3-7	դուրսները:
Կարեւոր բարաթը.	5 60			երկուշաբն.	Երեքշաբթի. Վերմիշչի
Առևտրական բանկի ալ-				Ռուսաստանից և	նեքին հ., Մինկեվիչ վի-
ցիան 200 մ.	315			Արտասահմանից	րաբուժական հ., Բակոտ
Փոթի Թիֆլիսեան երկա-				փոստը տալով թիֆ-	կուրծքի և ներվային հ.,
թուղու ալիքին 125 մ.	102			լիսուս ամեն օր. Բա-	Ա. Բախուսով կանանց
Շաբաթը բրոցկու	7 30			գուր արակոթից՝ երեք-	երեսաների հ. և մանկա-
" միւս տեսակը.	7 20			շաբթի և շաբաթ օրերը.	բարձուրեան. Բէյի աչքի
" շաբաթ աւագը.	5 40			Երևանի արակոթից՝ եր-	հ.
" տրանսպորտ.	6 20			կուշաբթի, հինգշաբթի և	Զորեքշաբթի. Լիւի-
" մաքուր զնարած	12 50			շաբաթ. Փոթի-Թիֆ-	ցեղ նեքին հ., Բակոտ
Բւմբակը Երևանու Ա-				լիսեան երկաթուղուց	վնեւրական և կաշու հ.
մերիկայի սերմից.	7 60			ամեն օր. Նուխու արակ-	Հինգշաբթի. Վերմի-
Միւս տեսակի հին սերմից.	7			ոթից չորեքշաբթի և կի-	շչի նեքին հ., Բուշարեանց
Բուրդը թուրք.	7 50			րակի. Բեթլիկից ար-	սիֆլիտական և միլային
" թարաքաւի	4 20			րակոթից երեքշաբթի և շա-	գործարանների:
Ալիւրը Գորազաւու	1 70			բաթի.	Աւբրաթ. Լիւիցեղ
" Երևանի.					նեքին հ. Բակոտ կրծքա-
Գարին	1				յին և ջղային հ., Ա. Բա-
Մեմորիանայի (смет.)	12 60				խուսով կանանց և երե-
Մետաքսը Նուխույ.	200				ւանների հ. և մանկաբա-
Կախեթուհի.	140				ձուրեան:
Կոկոնը Նուխույ (բոմ.)	40				Շաբաթ. Վերմիշչի նեք-
Յերիզոնը (լաւը) Ագու-					քին հ., Մինկեվիչ վիւր-
լեաց	55				բուժական հ., Բակոտ վե-
Կօֆէն մօկօի.	27				նեւրական կաշու հ., Բէյի,
" լիանի	22				աչքի հիւանդութիւնցի
" Մարտինոյին	18				